



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 18063

Ապրիլ 26, 1967

Հոգեշնորհ
Տ. Վազգէն վրդ. Թաղոյեան
Հոգեւոր Հովիւ Մօնթրէալի Հայոց
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Մօնթրէալ:

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք 1967 Ապրիլ 14 Թուակիք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Մարտ 5ին գումարուած Ձեր Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետեւած Թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ ղրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կանոնադրութեան տրամադրութեանց:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռախօսի թիւը:

*Ղազար Ելւարեան
Սիւսիտ Կարօյի մէջ
Վերսիլ Ելւարեան*

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ